ԵՐԵՎԱՆԻ Հ. 175 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

# ՊԼԱՆ
# 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ ԱՆ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

I ԲԱԺԻՆ

Հիմնական կազմակերպչական հարցեր, կրթության իրականացում

| Հ/հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող անձ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Դպրոցում աշխատանքները կազմակերպել առաջնորդվելով ԿԳՄՍՆ կողմից տրամադրած նոր ուսումնական տարվակազմակերպման ուղղեցույցներով, հրամաններով, կարգերով ու հրահանգներով | ուստարվա ընթացքում | տնօրեն փոխնօրեններ ուսուցիչներ | |
| 2. | Իրականացնել ԿԶՆԱԿ-ի և Հայկական կրթական միջավայրի ուսումնական գործընթացի կազմակերպմանն ուղղված նոր նյութերի ուսումնասիրում,քննարկում և տեղայնացում: | ուստարվա ընթացքում | Տնօրեն փոխտնօրեններ, մ/մ նախագահներ | |
| 3. | Ուսումնական նախագծերի, մշակված լրացուցիչ ուսումնական նյութերի և առարկայականհետազոտական աշխատանքների, մշակված և համալրված կրթական ռեսուրսների առարկայական բազաների ստեղծում | Ուստարվա սկիզբ | Տնօրեն փոխտնօրեններ, մ/մ նախագահներ | |
| 4. | Աշախատանքները 2,5,7-րդ դասարաններում կազմակերպել նոր ՀՊՉ-ներով | Ուստարվա սկիզբ | Տնօրեն Փոխտնօրեններ Դասավանդող ուսուցիչներ | |
| 5. | Կազմակերպել տնօրենին կից խորհուրդ | Ուստարվա սկիզբ | տնօրեն | |
| 6. | Հայտնաբերել ծնողազուրկ, ամբարենպաստ ընտանիքների երեխաներին և օգնել նրանց բոլոր կարիքներում: | ուստարվա ընթացքում | Տնօրեն կազմակերպիչ դաստեկներ դասվարներ | |
| 7. | Նպատակային օգտագործել նախատեսված, հաստատված բյուջեն /ֆինանսական միջոցներ բոլոր ուղղություններով/ | ուստարվա ընթացքում | տնօրեն դպրոցիխորհուրդ հաշվապահ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Խիստ վերահսկողություն սահմանել պարբերաբար ուշացողների և անհարգելի բացակայողների նկատմամբ և ժամանակին կանխել | ուստարվա ընթացքում | տնօրեն փոխնօրեններ դասղեկներ դասվարներ | |
| 9. | Վերանայելով ուշադրության կենտրոնում պահելԿԱՊԿՈՒ, հոգեբանական խնդիրներ ունեցող, չառաջադիմող աշակերտներին: Հաճախակի ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները: | ուստարվա ընթացքում | տնօրեն փոխնօրեններ դասղեկներ դասվարներ | |
| 10. | Ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային դասամատյանից դուրս բերել ընթացիկ գնահատականներըն բացակայությունները, խնդիրների դեպքում տեղեկացնել և աշխատանք տանել ծնողների հետ: | ուստարվա ընթացքում | տնօրեն փոխտնօրեն դասղեկներ դասվարներ | |
| 11. | Հետևողական աշխատանք տանել հատկապես VIII-XII դասարանների ուսման մեջ թերացող և դժվար դաստիարակվող երեխաների հետ՝ համագործակցելով նրանց ծնողների հետ | ուստարվա ընթացքում | ՄԿԱ, ՍԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ | |
| 12. | Որակյալ կրթության ապահովման նպատակով, բոլոր աշխատանքներին մասնակից դարձնել ուսուցիչներին, ծնողներին, աշակերտներին: | ուստարվա ընթացքում | Տնօրեն Փոխտնօրեններ Ծնողներ Ա/Խ | |

II ԲԱԺԻՆ
ՈՒսումնադաստիարակչական աշխատանքներ և ներդպրոցական վերահսկողություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ուսուցիչներին պարբերաբար ուղարկել առարկայական նոր չափորոշիչներով վերապատրաստումների, նրանց ապահովել ուսումնական ծրագրերով և լրացուցիչ նյութերով | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 2. | Աշխատանք տանել կաբինետները անհրաժեշտ նյութերով, պարագաներով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ | ուստարվա ընթացքում | տնօրեն, տնտես. գծով փոխտնօրեն | |
| 3. | Ուսման ընթացքում մեծ ուշադրություն դարձնել աշակերտի դիալեկտիկական մտածելակերպի զարգացման վրա և աշակերտին զինել ստեղծագործական, փորձնական, աշխատանքը կատարելու հմտությամբ, բնության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների | ուստարվա ընթացքում | փոխտնօրեն առարկայական ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | և օրինաչափությունների և ընդհանրացումներ կատարելու կարողունակությամբ: | | | |
| 4. | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու, դասապրոցեսը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան | ուստարվա ընթացքում | Տնօրեն կաբ. պատասխանատու | |
| 5. | Բարձրացնել ուսպլանով նախատեսված առարկաների դասավանդման որակը՝ կիրառելով ՏՀՏ-ներ | ուստարվա ընթացքում | Փոխտնօրեններ համակարգչային կաբինետի ղեկավար | |
| 6. | Ներառական կրթությունը արդյունավետ կազմակերպելու համար համագործակցել ՏՄԱԿ-իմասնագետների հետ: | ուստարվա ընթացքում | Տնօրեն Փոխտնօրեններ | |
| 7. | Ուսման որոկը բաձրացնելու նպատակով կատարել դասալսումներ,ուշադրության կենտրոնում պահելով 2,5,7-րդ դասարանները, արդյունքները քննարկել մ/մ- ների և մանկխորհրդի նիստերում | ուստարվա ընթացքում | Տնօրեն Փոխտնօրեններ մ/մ-ների նախագահներ ուսուցիչներ | |
| 8. | Կիսամյակը մեկ անգամ անցկացնել ստեղծագործական աշխատանք անձամբ տնօրենի մասնակցությամբ՝ հայոց լեզու,մաթեմատիկա,ֆիզիկա, քիմիա, օտար լեզու առարկաներից 10-րդ և 11-րդ դասարաններում: | ուստարվա ընթացքում | Տնօրեն Փոխտնօրեն | |
| 9. | Ներքին վերահսկողության շրջանակներում իրականացնել առարկաների դրվածքների ուսումնասիրում նախատեսված գրաֆիկով Արդյունքները ամփոփել մ/մ նիստերում | նոյեմբեր- 4-րդ փետրվար- 9-րդ դասարանն երում | փոխտնօրեն, մ/մ նախագահներ | |
| 10. | Կազմակերպել երկարօրյա պարապմունքներ ցածր առաջադիմություն ունեցող 2,5-րդ և 7-րդ դասարաններում | ուստարվա ընթացքում | փոխտնօրեն, մ/մ նախագահներ | |
| 11. | Առանձին առարկաների նկատմամբ հակում զարգացնելու, մասնագիտական կողմնորոշումը հստակեցնելու նպատակով, հատկապես 9-12-րդ դասարաններում կազմակերպել նպատակային էքսկուրսիաներ և հանդիպումներ: | ուստարվա ընթացքում | փոխտնօրեն, մ/մ նախագահներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12. | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստում | Դեկտեմբեր մայիս | տնօրեն փոխտնօրեն, մ/մ նախագահներ | |
| 13. | Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերին կանոնների ապահովման ուղղությամբ, կատարել դասղեկական ժամերի դասալսումներ | ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն ԴԱԿ | |
| 14. | Անցկացնել հիգիենայի և վարվեցողության կանոնների յուրացման պարապմունքներ I-V, VI-IX դասարանների աշակերտների համար՝ դրանք: | ուստարվա ընթացքում | դասվարներ, դասղեկնր բուժքույր | |
| 15. | Երիտասարդ և նոր ծրագրերով աշխատող ուսուցիչների մոտ հաճախակի դաս լսել և կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ դասվարներ, դասղեկներ | |
| 16. | Սովորողների հետ կազմակերպել և անցկացնել զրույց- հանդիպումները.<br>1. Աշակերտների մոտ ձևավորելով ազգային արժեքների գնահատման համագործակցությունը հայրենասիրության ընկերասիրության հանդուրժողականության որակներ: | ընթացքում | փոխտնօրեններ ՄԿԱ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 2. Կազմակերպել միջոցառումներ՝ հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները, ստեղծագործական որակները<br>3. Աջակցել ԿԳՄՍՆ-ի ,Երևանի քաղաքապետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կամ միջազգային, կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը<br>4. Մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպել հանդիպումներ, ըստ աշակերտների ցանկության<br>5. Ստեղծել և ապահովել հաղորդակցման միջավայր՝ հնարավորություն տալու աշակերտին ազատ արտահայտվել<br>6. Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ:<br>7. Պարբերաբար կազմակերպել շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում:<br>8. Նպաստել և աշխատանքներ տանել ազգային փոքրամասնությունների, լեզվի և մշակույթի զարգացման, իրավունքների իրականացման ուղղությամբ:<br>9. Սահմանել բաց դռների օր՝ ապահովելով ծնող ուսուցիչ կապը:<br>10. Հանդիպում մշակույթի բնագավառի գործիչների հետ /դերասան, նկարիչ, գրող, երաժշտագետ, արվեստագետ/<br>11. Դասղեկական ժամերից մեկը տրամադրել <<Աղետների և ռիսկերի նվազեցման>> կրթությանը, դիտել տեսանյութեր, կազմակերպել փորձնական տարհանումներ | ընթացքում<br>ընթացքում<br>սեպտեմբեր<br>ընթացքում<br>ընթացքում<br>ընթացքում<br>ընթացքում<br>նոյեմբեր<br>ամեն ամիս<br>մայիս<br>ընթացքում | դասվարներ,<br>դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17. | Ա/խ-ի և ծ/խ-ի օգնությամբ ժամանակ առ ժամանակ՝ մասնավորապես տոնական օրերին, ձևավորել շենքի միջանցքները, դասասենյակները, կաբինետները, կազմակերպել հաշվետու համերգներ | ուստարվա ընթացքում | ՄԿԱ դասղեկներ | |
| 18. | Ֆիզիկական դաստիարակության դասավանդման բարելավման նպատակով համալրել հաստատության մարզական գույքը, ձեռք բերել համազգեստ, իրականացնել տարաբնույթ սպորտային միջոցառումներ | ուստարվա ընթացքում | տնօրեն, տնտես□ գծով փոխտնօրեն | |
| 19. | Դպրոցում ձևավորված խմբակների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով աշխատանք տանել այլ դպրոցների համանման խմբակների երեխաների հետ թիմային և անհատական մրցություններ կազմակերպելու ուղղությամբ: | ամիսը 1-2 ժամ | ՄԿԱ | |
| 20. | Տարբեր մարզաձևերից կազմակերպել միջդասարանական մրցումներ, անցկացնել սպորտլանդիաներ, ռազմահայրենասիրական խաղեր: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ ֆիզկուլտուրայի ուսուցիչ, դասղեկներ | |
| 21. | Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, Արցախի պաշտպանության մարտերում աչքի ընկած զինվորների ու սպաների հետ | ուստարվա ընթացքում՝ հունվար, մայիս | ՄԿԱ, զինղեկ, դասղեկներ | |
| 22. | Անցկացնել ցերեկույթներ մարզական և մշակութային միջոցառումներ նվիրված ՀՀ անկախության օրվան | անկախութ.օրը սեպտեմբերի 21-ին մայիս | ՄԿԱ, դասղեկներ, խմբակների ղեկ. | |
| 23. | Հաշմանդամների պաշտպանության միջազգային օրվա արթիվ կազմակերպել միջոցառումներ | դեկտեմբերի 3 | ՄԿԱ, բ/թ դասղեկներ | |
| 24. | Կազմակերպել համադպրոցական միջոցառումներ՝ նվիրված Նոր տարվան և Ծննդյան տոներին: | դեկտեմբերի վերջին տասնօրյակ | ՄԿԱ, դասղեկներ | |
| 25. | Անցկացնել միջոցառումներ նվիրված նշանավոր գրողների, գիտնականների, հասարակական, քաղաքական գործիչների հոբելյանական տարելիցներին: | ուստարվա ընթացքում՝ ըստ ծննդյան ամիսների | ՄԿԱ, մ/մ ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26. | Բժշկի կամ բուժքրոջ միջոցով անցկացնել զրույցներ սովորողների օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի վերաբերյալ | տարեկան 2 անգամ | բուժքույր | |
| 27. | I-IXդասարանների սովորողների համար հաճախակի կազմակերպել զրույցներ ճանապարհային երթևեկության կանոնների, հետիոտնի պարտականությունների և իրավունքների վերաբերյալ: | յուրաքանչյուր կիսամյակում 2 անգամ | դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28. | Ստուգել ծրագրային նյութերի և ուսումնական առարկաների թեմատիկ պլանավորման վիճակը: | 10-15/09 | փոխտնօրեններ | |
| 29. | Ստուգել միջնակարգ պարտադիր կրթությանկատարման վիճակը դպրոցում պետական կրթական չափորոշիչով նախատեսված գիտելիքների յուրացման, ինչպես նաև որակյալ կրթության ապահովման նպատակով՝ելնելով հանրակրթական հաստատության կանոնադրության, <<Հանրակրթության>> և <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջներից և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում: | ուստարվա ընթացքում | տնօրեն փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |
| 30. | Ներքին վերահսկողության շրջանակներում իրականացնել գիտելիքի ստուգումներ գրավոր աշխատանքների տեսքով 6-12-րդ դասարաններում առարկայակն դրվածքների ուսումնասիրման գրաֆիկին համապատասխան: Այս շրջանակներում համապատասխան դասարաններում տալ նաև հայտորոշիչ թեստեր: Արդյունքները ամփոփել մ/մ նիստերում: | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |
| 31. | Ներքին վերահսկողության շրջանակներում ուշադրության կենտրոնում պահել 2,5,7-րդ դասարանների նոր ՀՊՉ-ները կիրառումը, յուրացումը, գնահատումը | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 32. | Անցկացնել գիտելիքի ստուգումներ 5-րդ դասարաններում մայրենի, մաթեմատիկա, ֆրա և սերե ն, անգլերեն և ռուսաց լեզու առարկաներից: Արդյունքները ամփոփել մ/մ նիստերում | սեպտեմբեր | փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |
| 33. | Առարկայական մ/մ-ների նախագահների օգնությամբ ստուգել նախատեսված բոլոր տեսակի գրավոր աշխատանքների քանակն ու որակը | Դեկտեմբեր մայիս | փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |
| 34. | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստում | Դեկտեմբեր մայիս | փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |
| 35. | Ստուգել էլեկտրոնային դասամատյանները, հետևելգրանցումների և գնահատման ժամանակին կատարմանը | Պարբերաբար | տնօրեն փոխտնօրեններ | |
| 36. | Կազմակերպել և իրականացնել դպրոցի նախակրթարանի գործունեությունը: | ուստարվա ընթացքում | տնօրեն փոխտնօրեն դաստիարակ | |

III ԲԱԺԻՆ

Ուսումնադաստիարակչական գործընթացի ղեկավարումը
Աշխատանք մանկավարժական կադրերի հետ

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1. | Նշանակել դասղեկներ, մեթոդմիավորումների նախագահներ | օգոստոսի 22-30 | տնօրեն | |
| 2. | Անցկացնել մեթոդմիավորումների նախագահների սեմինար-խորհրդակցություն, նրանց ծանոթացնել մեթոդմիավորումների կանոնադրությանը և նախանշել նրանց հետագա անելիքներն ուստարվա ընթացքում | սեպտեմբերի 1-10 | տնօրեն, Փոխտնօրեն ներ | |
| 3. | Անցկացնել դասղեկ-դասվարների սեմինար-խորհրդակցություններ, նրանց ծանոթացնել դասղեկի իրավունքներին ու պարտականություններին | սեպտեմբերի 1-10 | տնօրեն, ՄԿԱ | |
| 4. | Դպրոցում կազմակերպել մանկավարժական և տարիքային հոգեբանության սեմինար՝ ուսուցիչների, սովորողների և ծնողների համար | ուստարվա ընթացքում | Հոգեբան, փորձառու ուսուցիչնե ր | |
| 5. | Պլանավորել մ/մ-ների գործունեությունը՝ հաշվի առնելով ուստարվա ընթացքում դպրոցի ընդհանուր նպատակները և խնդիրները՝ այն տեղադրելով ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորված «Պաշարների շտեմարան» կայքում | սեպտեմբերի1-10 | Փոխտնօրե ններ մ/մ նախագահ ներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | Քննարկել առանձին առարկաների նոր ծրագրերը և դրանց համապատասխան փոփոխությունները: | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |
| 7. | Գրադարանում և ուսուցչանոցում ունենալ «Խորհուրդ ենք տալիս ընթերցել» ցուցափեղկը, որտեղ տեղ տալ նորություններին, մեթոդամանկավարժական առաջարկվող փորձին: | ուստարվա ընթացքում | գրադարանավար փոխտնօրեններ կազմակերպիչ | |
| 8. | Նոր դասագրքերի վերաբերյալ կազմակերպել բանավեճեր 1-ին դասարանից սկսած դասարաններում կազմակերպել ստուգողական աշխատանքները, հիմնական նպատակը դարձնելով ռեալ առաջադիմության որակի, դրանց արդյունքների վերաբերյալ կատարել մանրամասն վերլուծություն: | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ մ/մ նախագահներ | |
| 9. | Կազմակերպել առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդպրոցական տարածում | ուստարվա ընթացքում /հոկտեմբեր նայրիլ/ | տնօրեն, փոխտնօրեններ | |
| 10. | Ուսուցիչներին մշտապես հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին՝ կազմակերպել սեմինարներ, մանկավարժա-մեթոդական ընթերցումներ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ | |
| 11. | Ուսուցիչներին մշտապես ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ԿԳՄՍ նախարարի, քաղաքապետի հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | յուրաքնչյուր ամիսը մեկ անգամ | տնօրեն, փոխտնօրեններ | |
| 12 | Հաստատել դասղեկների և մ/մ նախագահների, ումասվարների պլանները: | ուստարվա սկզբին | տնօրեն, փոխտնօրեններ | |

## IV ԲԱԺԻՆ
### Աշխատանք ծնողական համայնքի հետ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Հրավիրել ծնողական և աշակերտական ընդհանուր ժողովներ, վերլուծել և ամփոփել 2022-2023 ուստարվա կատարած աշխատանքները | | տնօրեն<br>ՄԿԱ<br>ՄԴԱԿ | |
| 2. | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել դասարանական խորհրդի անդամներ և նախագահներ | սեպտեմբերի 1-10 | փոխտնօրեններ<br>ՄԿԱ,<br>դասղեկներ,<br>դասվարներ | |
| 3. | Ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ, նրա անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրության հետ | սեպտեմբերի 1-10 | Տնօրեն,<br>փոխտնօրեններ<br>ՄԿԱ | |
| 4. | Ըստ հանրակրթության օրենքի ընտրել ա/խ-ի նախագահ | սեպտեմբերի 1-10 | ՄԿԱ<br>ՄԴԱԿ | |
| 5. | Դասարանների ծնողխորհուրդների մասնակցությամբ կազմակերպել և անցկացնել ծնողական ժողովներ և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր | սեպտեմբեր մարտ | տնօրեն<br>փոխտնօրեններ<br>ՄԿԱ<br>ծ/խ-ի նախագահ | |
| 6. | Ծնողական համայնքի միջոցով պարզել ծնողազուրկ երեխաներին և նրանց շրջապատել հոգատարությամբ, կազմակերպելով համապատասխան նյութական և բարեգործական օգնություն: | հոկտեմբեր | ՄԿԱ,<br>Կազմակերպիչ,<br>դասղեկներ,<br>դասվարներ,<br>ծնող խորհրդի նախագահ | |
| 7. | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: Ուսումնական տարվա ընթացքում հաճախակի լսել առանձին դասարաններում ծնողխորհրդի նախագահների հաշվետվությունները:: | ուստարվա ընթացքում | տնօրեն,<br>կազմակեր<br>պիչ, ծնող<br>խորհրդի<br>նախագահ | |
| 8. | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման համար: | ուստարվա ընթացքում | Տնօրեն,<br>ՄԿԱ | |
| 9. | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին | պարբերաբար | ՄԿԱ,<br>դասղեկներ | |
| 10, | Ծնող խորհրդում քննարկման առարկա դարձնել մասնագիտական կողմնորոշման և ավագ դպրոցում ուսուցումը շարունակելու հարցը: | ուստարվա ընթացքում | Դասղեկներ,<br>կազմակերպիչ | |

V ԲԱԺԻՆ

Արտադասարանական դաստիարակչական աշխատանքները

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Կազմակերպել թեմատիկ էքսկուրսիաներ «Հայրենի բնություն, աշխարհ» թեմայով | ուստարվա ընթացքում | Դասղեկներ | |
| 2. | Կազմակերպել մանկական ստեղծագործությունների ցուցահանդես «Իմ երազանքի տունը » թմայով | ուստարվա ընթացքում | դասղեկներ | |
| 3. | Հայտարարել «Հույսի գարուն» թեմայով լավագույն շարադրության մրցանակաբաշխություն | ուստարվա ընթացքում | դասղեկներ | |
| 4. | Ավագ դպրոցի աշակերտների միջոցով կազմակերպել ազգային ազատագրական շարժումը մեկնաբանող բանավեճեր՝ բացահայտել դրանց նպատակները և խնդիրները: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ,<br>ԴԱԿ,<br>դասղեկներ | |
| 5. | Արտադասարանական աշխատանքների ընթացքում հաճախակի անդրադառնալ հայ հերոսամարտին, հերոսների կյանքին և գործունեությանը, ստեղծել համապատասխան ցուցափեղկ: | ուստարվա ընթացքում | ԴԱԿ<br>դասղեկներ | |
| 6. | Կազմակերպել հանդիպումներ «Աշակերտների վարքագիծը և մեր ժամանակների կերպարը», «Մի հիշարժան օր», «Երազանք և իրականություն» թեմաներով: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ,<br>ԴԱԿ.<br>դասղեկներ | |
| 7. | Կազմակերպել բանավեճեր <<Ինչ է երջանկությունը>>, <<Ինչպես եմ պատկերացնում մտերմությունը և ընկերությունը>> թեմաներով: | ուստարվա ընթացքում | Տնօրեն<br>կաբ.<br>պատասխանատու | |
| 8. | Աշակերտական խորհրդի համար մշակել առանձին գործունեության պլաններ արդիական խնդիրներին համապատասխան: | ուստարվա ընթացքում | ԴԱԿ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9. | Մշակել ազգային տոների համապատասխան օրացույց և հետևել դրանց կենսագործմանը | ուստարվա ընթացքում | տնօրեն կազմակերպիչ | |
| 10. | Կազմակերպել մարզական մրցույթներ<br>ա) շաշկու, շախմատի<br>բ) վոլեյբոլի, բասկետբոլի<br>գ) ֆուտբոլիթթ<br>դ) թեթև ատլետիկա | Հոկտեմբեր ապրիլ | կազմակերպիչ դասղեկներ ֆիզկուլ. ուս. | |

VI ԲԱԺԻՆ

Ռազմահայրենասիրական , ֆիզիկական և հոգևոր դաստիարակություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Դաստիարակության այս ուղղությունը նպատակային և արդյունավետ դարձնելու համար<br>ա) վերանայել ՆԶՊ դասերի բովանդակությունը և ուղղվածությունը<br>բ) կազմակերպել հրաձգության մրցույթներ<br>գ) ծանոթանալ հայ զինվորների կյանքին, ստեղծագործական ուղղուն և ռազմավարական արվեստի նրանց գործերին: | ուստարվա ընթացքում | Տնօրեն, զինղեկ Փոխտնօրեններ, դասղեկներ | |
| 2. | Անցկացնել թեմատիկ երեկոներ, ցերեկույթներ<br>ա) նվիրված ազգային ազատագրական շարժումներին<br>բ) ֆիդայիների կյանքին և նրանց գործունեությունը դրանց նպատակներին և խնդիրներին: | ուստարվա ընթացքում | ԴԱԿ պատմ. ուս. | |
| 3. | Ծանոթացնել ազգային զինված ուժերի կառուցվածքին: | ուստարվա ընթացքում | զին. ղեկ. | |
| 4. | Կազմակերպել բանավեճեր <<Ազգային զինված ուժերը, դրանց դերը հանրապետության անկախությունը ապահովելու հարցում>> թեմայով: | ուստարվա ընթացքում | զին. ղեկ. հ. լ. և գրակ. ուսուցիչներ | |
| 5. | <<Հայրենիքին ծառայել և նրա պաշտպանությունը հզորացնել յուր. Հայ մարդու պարտքն է>> նշանաբան դարձնել յուր. պատանու մտածելակերպը: | ուստարվա ընթացքում | զին. ղեկ. դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | Կազմակերպել ներդպրոցական մարզական շաբաթներ: | հոկտեմբեր մայիս | ԴԱԿ Ֆիզ. ուսուց. | |
| 7. | Մեր հանրապետության առաջատար մարզիկների նվաճումները մեկնաբանող ցուցափեղկ պատրաստել | հունվար | ԴԱԿ | |
| 8. | Ազգային հարցերի ցուցադրական մրցույթ ստուգատեսներ նախապատրաստել և կազմակերպել | մայիս | ԴԱԿ Ֆիզ. ուսուց | |

Հոգևոր դաստիարակություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9. | «Կրոնը և բարոյականությունը», «Կրոնը և մշակույթը» թեմաներով զրույցներ կազմակերպել տարբեր դասարաններում: | ուստարվա ընթացքում | ԴԱԿ դասղեկներ | |
| 10. | Աստվածաշնչի մասին ծանոթացնել բարձր դասարանցիներին, նշելով նրա դերը և նշանակությունը | Ուստարվա ընթացքում | դասղեկներ, պատմ. ուսուց. | |
| 11. | «Հայաստանը և նրա հարակից երկրները, դրանցում տարածված կրոնները» թեմաներով զրույց- դասախոսություն կազմակերպել | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ, ԴԱԿ, դասղեկներ, պատմ. մ/մ | |
| 12. | Աշակերտներին ծանոթացնել հայ միջնադարյան կիրառական արհեստներին, արվեստին, դրանց ակնառու ներկայացուցիչներին, հիմնական ուշադրություն դարձնելով հոգևոր խնդրին | ուստարվա ընթացքում | ՄԿԱ, ԴԱԿ, դասղեկներ | |

## VII ԲԱԺԻՆ

Աշակերտների մասնագիտական կողմնորոշումը և գեղագիտական դաստիարակությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Դպրոցում աշխ. ուս. դասերին շարունակել և խորացնել ազգային արհեստների ուսումնասիրությունը, այն հասցնել այն մակարդակի, որ աշակերտները կարողանան ինքնուրույն ամբողջական արժեքներ ստեղծեն: | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ դասղեկ | |
| 2. | Կազմակերպել աշխ. ուս. Ուսուցիչների և աշակերտների ուժերով դպրոցական գույքի վերանորոգում, դիտողական պարագաների պատրաստումը: | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ դասղեկ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Հանձնարարել 9-12-րդ դասարանների դասղեկներին ուսումնասիրել աշակերտների մասնագիտական հակումները, զրույցներ կազմակերպել ծնողների հետ: | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ դասղեկ | |
| 4. | Կազմակերպել աշակերտական գիտագործնական համաժողով «Բոլոր մասնագիտությունները լավ են, բայց իմ ընտրածն առավել է» թեմայով, նրանում մեծ տեղ տալ ազգային կիրառական արհեստներին: | Հունվար | Կազմակերպիչ դասղեկ | |
| 5. | Բացի ծրագրային էքսկուրսիաներից, գրողների, երգահանների,նկարիչների հետ հանդիպումներ կազմակերպել: | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ հ.լ. ուսուց.մ/մ | |
| 6. | 5-9-րդ դասարաններում կազմակերպել զրույց-դասախոսություններ «Արվեստի օրենքը ճշմարտություն է», «Գեղարվեստական գրականությունը կյանքի աղբյուր է», «Իմ հայրենիքը և մայրաքաղաքի գեղեցիկ վարդերը» թեմաներով: | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ դասղեկներ | |
| 7. | 10-12-րդ դասարանների համար զրույց «Իսկական արվեստը կենդանի է», «Նկարիչ-արվեստագետն իր ժամանակաշրջանի զավակն է», Իլոն Մասկի «Երբ բոլորը քո դեմ են» գրքի քննարկում, Ախիլ Շարմա «Ընտանեկան կյանք» գրքի քննարկում: | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ դասղեկներ | |
| 8. | Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի ճարտարապետական կոթողներն ընդգրկող տարածքներում: | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ դասղեկներ | |
| 9. | Դպրոցում ունենալ մշտական գործող ցուցահանդեսներ.<br>ա) նկարում են մեր աշակերտները<br>բ)պատրաստում են մեր աշակերտները | Ուստարվա ընթացքում | Կազմակերպիչ դասղեկներ | |
| 10. | Աշակերտների գեղագիտական զարգացման և բարձրացման խնդիրները ևս դարձնել տնօրինության մտահոգության առարկա | Ուստարվա ընթացքում | Տնօրեն | |

VIII ԲԱԺԻՆ

Աշակերտական խորհրդի գործունեությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ստեղծել հաստատության աշակերտական խորհուրդ, մշակել կանոնադրություն, կառուցվածքը և սահմանել գործունեության ոլորտները: | Սեպտեմբեր հոկտեմբեր | կազմակերպիչ | |
| 2. | Հաճախակի կազմակերպել աշակերտական միությունների հավաքներ, մասնակից դարձնելով ուսուցիչներին և դասղեկներին: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ, ԴԱԿ | |
| 3. | Կազմակերպել աշակերտական միությունների ակտիվացումը հրավիրել սեմինարներ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ, ԴԱԿ | |
| 4. | Ուժեղացնել աշակերտական խորհրդի ինքնավարությունը՝ ստեղծելով որոշակի հանձնաժողովներ<br>ա)ուսումնական և դաստիարակչական<br>բ) գաղափարական<br>գ) ռազմահայրենասիրական<br>դ) սանիտարատնտեսական | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ, ԴԱԿ | |
| 5. | Պետականամետությունը, հայրենասիրությունը և մարդասիրությունը դարձնել աշակերտական միությունների աշխատանքների կազմակերպման հիմքը: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ, ԴԱԿ | |

IX ԲԱԺԻՆ

Ֆինանսատնտեսական գործունեության և ուսումնանյութական բազայի ամրապնդում

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Կազմել տարիֆիկացիան | սեպտեմբեր | Տնօրեն | |
| 2. | Կազմել ծախսերի նախահաշիվ, բյուջետային հատկացումների փաստաթղթերը ներկայացնել հաստատման: Ներկայացնել կառավարման խորհրդին | ֆինանսական տարվա անհրաժեշտ ժամանակա-հատվածում | Տնօրեն<br>գլխ. հաշվապահ | |
| 3. | Ժամանակին ներկայացնել դպրոցի կառավարման խորհրդի հաստատմանը՝ շենքի վերանորոգման և գույքի ձեռք բերման և այլ նպատակով համապատասխան ծախսերի նախահաշիվը: | ուստարվա անհրաժեշտ ժամանակա-հատվածում | Տնօրեն | |
| 4. | Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսուցման տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ | ուստարվա ընթացքում | Տնտես. գծով տնօրենի տեղ.կաբինետների վարիչներ, լաբորանտներ | |
| 5. | Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում | նոյեմբեր դեկտեմբեր | Տնտես. գծով տնօրենի տեղ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | Ապահովել շենքի լուսային, ջերմային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները, շենքի նկուղները: | Ուստարվա ընթացքում | Տնտես. Գծով տնօրենի տեղ. | |
| 7. | Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը,այգին, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը: | ուստարվա ընթացքում | Տնտես. գծով տնօրենի տեղ. | |
| 8. | Աշխատանք տանել կաբինետ-լաբորատորիաների կահավորման, հարստացման, եղած գույքն ու սարքավորումները արդյունավետ օգտագործելու ուղղությամբ: | պարբերաբար | կաբինետների պատասխան. լաբորանտներ | |
| 9. | Օրենքով սահմանված կարգով կազմակերպել սովորողների առողջ սնունդ և սահմանել հսկողություն | տարվա ընթացքում | Տնօրեն<br>ՄԿԱ<br>ծ/խ | |
| 10. | Ուշադրության կենտրոնում պահել emis.am կայքը, դպրոցի պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը, libarmedu.am կայքը հետևել բոլոր նոր հրահանգներին և փաստաթղթերի վարման կանոններին<br>✓ Էլեկտրոնային մատյաններ<br>✓ Աշակերնների անձնական գործ<br>✓ ԿԱՊԿՈՒ աշակերտների գրանցում<br>✓ Տարիֆիկացիայի կազմում<br>✓ Հաստիքների ձևավորում<br>✓ Ուսուցիչների անձնական գործ<br>✓ Աշակերտի անձնական գործ<br>✓ Աշակերտների շարժ<br>Դպրոցի տվյալներ | Ամեն օր | Տնօրեն<br>Փոխտնօրեննր<br>էլ. կառ. և դաս. ապահովման մասնագետ<br>Գործավար<br>Հաշվապահ<br>Դասղեկներ | |
| 11. | Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ՝ յուրաքանչյուր 15 օրը մեկ անգամ, յուրաքանչյուր ամսվա վերջին խորհրդակցությունում քննարկել անցած ամսվա կատարած աշխատանքները, հաստատել եկող ամսվանը | ուստարվա ընթացքում | Տնօրեն | |
| 12. | Հրավիրել VI-IX դասարանի սովորողների ընդհանուր ժողով, որի ընթացքում՝<br>ա/ ընդհանուր ժողով ձևավորել աշակերտական գործադիր մարմին՝ խորհուրդ<br>բ/ օրինակելի կանոնադրության հիման վրա հաստատել դպրոցի աշակերտական խորհրդի կանոնադրությունը<br>գ/ հաստատել աշակերտական խորհրդի կազմը | սեպտեմբերի1-ին շաբաթ | Տնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13. | Մշտական աջակցություն ցուցաբերել աշխորհրդին | ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ՄԴԱԿ | |
| 14. | Աշակերտական խորհրդի գործունեության հիմնական խնդիրները համարել՝<br>ա/ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը<br>բ/ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների ամրապնդմանն ու զարգացմանը նպաստելը<br>գ/ դպրոցում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը<br>դ/ սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը<br>ե/ երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, 8քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը | ուստարվա ընթացքում | ա/խ<br>ՄԿԱ<br>ՄԴԱԿ | |